



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ  
ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Նախարարություն - Էներգախնայողություն**

**ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ**

**Էներգախնայողությունը** իրավական, կազմակերպչական, գիտական, արտադրական, տեխնիկական և տնտեսական նպատակային գործունեություն է՝ ուղղված էներգետիկ ռեսուրսների տեսակարար ծախսի նվազեցմանը:

Անցյալ դարի վերջին տասնամյակներում համաշխարհային առաջավոր էներգախնայողության փորձը ցույց տվեց, որ գործող տեխնոլոգիաների էներգախնայողական ներուժը կազմում է էներգածախսի 30-ից 40%-ը, իսկ վառելիքի տնտեսումը 2-ից 3 անգամ էժան է, քան համարժեք քանակությամբ վառելիքի արդյունահանումն ու մատակարարումը սպառողներին:

Էներգախնայողությունը՝ որպես նոր աղբյուր, ավելի շահավետ է մյուս էներգաաղբյուրներից: Այսպես, ըստ Միջազգային էներգետիկական գործակալության տվյալների՝ էներգախնայողական միջոցառումների իրագործման մեջ ծախսված յուրաքանչյուր դոլարն ավելի շատ «մաքուր» էներգիա է տալիս, քան այն դոլարը, որը ծախսվում է էներգիայի այլ աղբյուրների ստեղծման համար: Հարկ է ընդձեռնել, որ խնայված էներգիայի զգալի մասը ձեռք է բերվում սպառման ոլորտում, և այդ էներգիան էկոլոգիապես մաքուր է, քանի որ նրա ստացման պրոցեսը արտանետումներ չունի և, ընդհակառակը, նվազեցնում է արտանետումները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջնային է համարում էներգախնայողությունը որպես երկրի էներգետիկ անվտանգության, տնտեսական մրցունակության մեծացման և շրջակա մջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման միջոց: ՀՀ կառավարության կողմից վարվող քաղաքականությունն է՝ խթանել էներգախնայողությունը տնտեսության բոլոր ճյուղերում, ինչն էլ սահմանված է «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում (2004թ.), «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրում» (2007թ.), «Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի կատարմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից» (2008թ.) և այլ օրենսդրական ակտերում:

պետության կառավարության գործողությունների ծրագրում» (2010թ.) «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի կարգադրությունում» (2013թ.), «ՀՀ էներգետիկ անվտանգություն գործողությունների 2014-2020թթ. ծրագրում» (2014թ.) և «ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036թ.) զարգացման ուղիները» ռազմավարական փաստաթղթում (2015թ.):

Հիմնվելով «էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի» վրա, Համաշխարհային բանկը 2008թ. իրականացրել է ուսումնասիրություն, որով բացահայտել է տնտեսապես և ֆինանսապես կենսունակ էներգախնայողության ներուժ ունեցող ոլորտները, իրացման խոչընդոտները և առաջարկել միջոցառումներ՝ դրանք հաղթահարելու համար:

Հայաստանը մեծապես կարող է խնայել ներդնելով էներգախնայողության մեջ: Համաշխարհային բանկի 2008թ. ուսումնասիրությունը բացահայտեց, որ, ներդնելով էներգախնայողության մեջ, Հայաստանը կարող է խնայել տարեկան 132 մլրդ. դրամ: Դա հավասար է էներգիայի խնայողության մոտ 1,21 մլն.տնհ տարեկան կամ 1 ՏՎտժ էլեկտրաէներգիա, կամ 600 մլն. մ<sup>3</sup> բնական գազ: Բացի արտադրված էլեկտրաէներգիայի և ծախսերի խնայողությունը, էներգախնայողությունը մի անհրաժեշտ պայման է Հայաստանի էներգամատակարարման տարբերակման և հետևաբար տնտեսական մրցունակության բարելավման համար: Եվ սա կարող է իրականացվել ավելի քիչ ծախսերով, քան նոր արտադրական հզորությունների ստեղծման կամ էներգիայի ներմուծման համար ներդրումներ կատարելը: Էներգախնայողության ներդրումները հիմնականում տնտեսապես և ֆինանսապես կենսունակ են, հատկապես հանրային ոլորտի ներդրումները տալիս են ընդհանուր ներդրման առավելագույն վերադարձ:

Ջարգացման քաղաքականության գործողությունների ներքո ՀՀ կառավարությունը պարտավորվել է ընդունել ժամանակացույցային էներգախնայողության գործողությունների ծրագիր (ԷԳԾ):

2010թ. նոյեմբերի 7-ի № 43 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի կատարմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության գործողությունների ծրագրին» (ԷԳԾ-1):

2017թ. փետրվարի 2-ի № 4-7 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «2017-2018 թվականների Հայաստանի Հանրապետության էներգախնայողության գործողությունների ծրագրի երկրորդ փուլին» (ԷԳԾ-2): Սույն որոշման ընդունմամբ սահմանվել են նոր միջոցառումներ, որոնք կօժանդակեն ՀՀ էներգախնայողության քաղաքականության հետագա ձևավորմանը և դրա իրականացմանն ուղղված կոնկրետ քայլերի որոշակիացմանը:

2016թ. ընդունվել է «էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին», օրենքում լրացումները և փոփոխությունները կատարելու մասին օրենքը, որի ընդունմամբ սահմանվել են մի շարք պարտադիր պահանջներ էներգախնայողության ոլորտում, մասնավորապես՝ տնտեսության ճյուղերի դասակարգում ըստ էներգատարության՝ բարձր, միջին և ցածր, նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքե-

րում ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության պարտադիր տեխնիկական պահանջների սահմանում ՀՀ կառավարության կողմից, ՀՀ էներգետիկ հաշվեկշռի վարում, մշակում և հրապարակում պետական վիճակագրություն իրականացնող և էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարում իրականացնող լիազոր մարմինների կողմից և այլն:

2015թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ կառավարության № 1492-Ն որոշմամբ սահմանվել են էներգասպառող սարքերի և սարքվածքների պիտակավորման կարգը և պիտակի ձևը: Սույն որոշման ընդունմամբ սահմանվել են էներգասպառող սարքերի և սարքվածքների պիտակավորման կարգը և պիտակի ձևը, ինչը գերծ կպահի սպառողների թյուրիմացության մեջ գցող գործոններից՝ ընձեռնելով գազի և էլեկտրաէներգիայի տնտեսման հնարավորություն:

2015թ. մայիսի 8-ին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության միջև կնքվել է «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը ՀՀ էներգետիկ հաշվեկշռի կազմման համար տրամադրվող տեղեկատվության վերաբերյալ» համաձայնագիր:

2017թ. փետրվարի 1-ին ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից պաշտոնապես հրապարակվել է Հայաստանի 2015թ. էներգետիկ հաշվեկշիռը:

2018թ. հունվարի 31-ին ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից պաշտոնապես հրապարակվել է Հայաստանի 2016թ. էներգետիկ հաշվեկշիռը:

2015թ. սեպտեմբերի 10-ի № 1026-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը փոփոխություններ և լրացումներ է կատարել էներգետիկ փորձաքննության իրականացման կարգում, որով հստակեցվել են գործող կարգում փորձաքննություն իրականացնող կազմակերպությունների իրավական կարգավիճակը, դրանց հավատարմագրման և դրանց կողմից համապատասխան սերտիֆիկատներ տալու գործառույթները:

2018թ. ապրիլի 12-ի № 426-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը սահմանել է Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը: Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ կմտնի 2019թ. հոկտեմբերի 24-ից:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շենքերում լրացուցիչ կապիտալ ներդրումները կարող են կազմել առավելագույնը 15%, իսկ էներգախնայողության արդյունքը՝ մինչև 50%: Հայաստանի շուրջ 19000 շենքերի գերակշռող մասը կառուցվել են խորհրդային ժամանակներում՝ 35-ից 60 տարի առաջ՝ առանց որևէ էներգախնայողության դիտարկման: Այդ շենքերից շատերը քայքայված վիճակում են և չեն ապահովում նվազագույն հիգիենիկ և հարմարավետ կյանքի պայմաններ: Էներգիայի օգտագործումը, ըստ մեկ մետր քառակուսու, մոտ 3-ից 5 անգամ բարձր է, քան զարգացած երկրներում և տատանվում է տարեկան 320-ից 690 կՎտժ/մ<sup>2</sup>: Համաձայն նախնական ուսումնասիրությունների՝ բնակելի և հանրային շենքերի արդյունավետ ջեր-

մամեկուսացման միջոցով ջեռուցման համար նախատեսված էներգասպառումը հնարավոր է կրճատել առնվազն 40%-ով: Նորակառույցները, որոնք կազմում են բոլոր շենքերի շուրջ 10-ից 12% հիմնականում մասնավոր են և հաճախ կառուցվում են սահմանափակ ֆինանսական միջոցներով, ինչը բերում է ոչ համարժեք շինանյութերի օգտագործման: Շենքերում խնայված էներգիայի մեկ միավորի միջին արժեքը կազմում է 1-ից 4 ԱՄՆ ցենտ 1 կՎտժ-ի համար, մինչդեռ Հայաստանի էներգետիկ համակարգի արտադրած էներգիայի միջին արժեքը 5 ԱՄՆ ցենտ է, իսկ նոր նախատեսված արտադրական հզորությունների արտադրանքի արժեքը՝ 8 ԱՄՆ ցենտից ավելին: Շենքերի ջեռուցումը, հովացումը և տարբեր սարքավորումների օգտագործումը ամենամեծ սպառիչներն են շենքերում: Նշված սարքավորումների էներգախնայողության բարելավմանը զուգահեռ սպառողի արդյունավետ վարքագիծը այս ոլորտում կիրացնի ավելի մեծ խնայողության ներուժ (մինչև 60%):